սահմաններում միայն, որոնք հայկական պահանջների մէջ են մտնում։ 2200–2500 քառ. քմ. տարածութիւն ունեցող այդ երկրամասում, համաձայն նախապատերազմեան վիճակագրութեան, ապրում էր 125–130 հազարի հասնող բնակչութիւն։

Եթէ Լոռիում հայութիւնը խիտ է ապրում, կազմում է բացարձակ մեծամասնութիւն, Հայկական Բորչալում հայ բնակչութիւնը բազդատարար նօսր է, մանաւանդ դաշտային մասերում։ Արդէն այդպէս է ամէն տեղ. թուրք–թաթար հօրդաները ամէն տեղ էլ եկել–դրաւել են դաշտագետինները եւ այնտեղից քշել հայերին դէպի լեռները։

Նոյնն է տեղի ունեցել նաեւ Բորչալուում։ Հակառակ այդ բանին, հայ տարրը այսօր եւս համեմատական մեծամասնութիւն է կազմում այնտեղ միւս ազգութեանց հանդէպ, առանձին առանձին վեր առած։ Այսօր էլ հայութեան թիւը այդտեղ յամենայն դէպս 30–35 հազարից պակաս չէ։ Բոլոր մահմեդականները միասին վեր առած՝ այդչափ էլ չեն, իսկ վրացիները հօ աննշան թիւ են ներկայացնում, 2–3 անգամ աւելի պակաս, քան յոյները, մի դաւառակում (Եկատերինֆէլտ) մինչեւ իսկ գերմանացիներից պակաս (Հայկական Բորչալուի ազգաբնակութեան թիւը 80–85 հազար հաշուելու է։

Ինչ խօսք. ազգաբնակութեան թուին նայելով՝ հայկական դիրքերը այստեղ այնպէս ամուր չեն, ինչպէս Լոռիում կամ թէկուզ Զաւախքում։ Բայց եւ այնպէս, այդտեղ եւս, Արարատի աջ ափին, մենք բազդատական մեծամասնութիւն ենք կազմում։ Վրացիք յամենայն դէպս բանական իրաւասութիւն չունին նրա վերաբերմամբ։ Եւ եթէ հակառակ դրան նրանք այնուամենայնիւ իրենց ձեռքում են պահում այդ դաւառը, այդ էլ միայն եւ միայն նրա համար, որ ցարական ռուսները «Թիֆլիսի նահանգի» մէջ են մտցրել այն, բոլշեւիկ ռուսներն էլ նուիրագործել են այդ «իրաւունքը»։

Ինքերը պարզ է. եթէ իրաւունքին դայ խօսքը, Հայկական Բորչալուն ամբողջապէս Հայաստանին պիտի պատկանի եւ ոչ թէ Վրաստանին։ Առաւել եւս՝ համայնավար, խորհրդային վարչակարգի տակ, եթէ ի հարկէ այդ վարչակարգը մարմնաւորող կուսակցութիւնը եւ իշխանութիւնը առհասարակ իմաստ են դնում նոյն այդ բառի մէջ եւ ոչ թէ իրենք էլ խաբէութիւն համարում սեփական նշանախօսքերը։

Ո՛չ Խորհրդային իշխանութիւնը եւ ոչ էլ վրացիները իրաւունք ունին մոռնալու, որ Վրաստանը ոչ միայն իր սահմանները ընդարձակել է հայկական հողերի հաշուին, այլ եւ այն, որ նա իր ամբողջական պահպանումը պարտական է նաեւ Հայաստանին։ Ինչպէս շատ յաճախ անցեալում, այնպէս նաեւ մեր օրերում Հայաստան քանիցս իր սեփական թիկունքի վրայ ընդունելով արտաքին թշնամու հարուածները, ազդայնապէս եւ տերրիտորիապէս յօշոտուելով չարունակ՝ փոքրացել, կծկուել է անճուկ սահմանների մէջ, դերծ պահելով դրանով իսկ հարեւան Վրաստանին՝ մատնուելու նոյն այդ վիճակին։ Մինչեւ որ թշնամու բռունցքը նրան է հասել, թուլացել, բաւական անվտանգ է դարձել այն, իր թափը մեր մէջքի վրայ կոտրելով։

Հեռատեսութիւն եթէ ունենային վրացիք, եթէ իրենց սեփական պատմութեան խորքը թափանցէին,— այնչափ սերտօրէն կապուած է նա մերինի հետ,— այդ պարագային — նրանք իրենց երկրի շահերի տեսակէտից իսկ՝ պիտի ցանկային տեսնել ուժեղ Հայաստան, անգամ ի դին իրական զիջումների։

Եւ յետոյ, վրացիք իրաւունք չունին անտես անելու այն փաստը եւս, որ Բաթումը եթէ ազատուել է իրենց համար, ապա այդ եղել է՝ ի դին մեր Սուրմալուի, եթէ ուրիշ բան ասելու չլինենք։ Իսկ մի՞թէ Բաթումը, որ Բրեստ–Լիտովսկի դաշնագրով Տաճկաստանին պիտի անցնէր, բայց որը 1921–ին ռուս–տաճկական դաշնագրով Սուրմալուով փոխարինուեցաւ, մի քանի անգամ աւելի արժէք չունի, քան Հայկական Բորչալուն կամ Ախալքալաքը, եւ կամ թէկուզ երկուսը միասին առած։

Կայ նաեւ մի ուրիշ պարագայ։ Հայ հասարակութիւնը սկզբից եւ եթ ու գիտակցաբար ոչ մի նկրտում հանդէս չէ բերել Թիֆլիս քաղաքի եւ դաւառի վրայ, որ անմիջականապէս սահմանակից է Հայկական Բորչալուին